ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«19» նոյեմբեր 2018թ. No 2979 - Ա

ՍԵՐԲԻԱՅԻ «ԶԴՐԱՎԼԵ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ «ՍՊԱԶՄԱԼԳՈՆ, ԴԵՂԱՀԱՏԵՐ, 500ՄԳ+5ՄԳ+0,1ՄԳ, ԲԼԻՍՏԵՐՈՒՄ 50/5Х10/)» 1801800 ՍԵՐԻԱՅԻ (ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ՝ 12.2019Թ.) ԴԵՂԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԵՏՀԱՎԱՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդհանուր և արտաքին կապերի բաժին
№ 10976 19 NOV 2018 ժամ 15.20
Կից ☐ Դեղի կարգավիճակ
Նշումներ

Հիմք ընդունելով Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի «20» ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի փետրվարի 24-ի N303-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, բժշկական նշանակության այլ արտադրանքի և կենսակտիվ սննդային հավելումների շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը, հետկանչի մասին ահազանգի ծանուցման և հետ կանչի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ձևերը հաստատելու մասին» կարգի 3-րդ կետը, ինչպես նաև «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 2018 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 0114153818 եզրակացությունը, համաձայն որի «Սպազմալգոն, դեղահատեր, 500մգ+5մգ+0,1մգ, բլիստերում 50/5x10/)» 1801800 սերիայի (պիտանիության ժամկետ՝ 12.2019թ.) դեղը գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Դեղատնային գործունեություն իրականացող, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին՝ դադարեցնել Սերբիայի «Զդրավլե» դեղագործական ընկերության արտադրության «Սպազմալգոն, դեղահատեր, 500մգ+5մգ+0,1մգ,

Հանձն. 19.11.18

բլիստերում 50/5x10/)» 1801800 սերիայի (պիտանիության ժամկետ՝ 12.2019թ.) դեղի շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. «Նար-Արս Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝

1) Ապահովել սույն հրամանի առաջին կետում նշված «Սպազմալգոն, դեղահատեր, 500մգ+5մգ+0,1մգ, բլիստերում 50/5x10/)» 1801800 սերիայի (պիտանիության ժամկետ՝ 12.2019թ.) դեղի շրջանառության դադարեցումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում և հետ հավաքումը՝ այդ մասին տեղեկատվություն տրամադրելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

4. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ.Թոփչյանին՝

1) սահմանված կարգով ապահովել հետհավաքման գործընթացի համակարգումը և արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ առողջապահության նախարարություն:

5. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի օրինակի հանձնումը սույն վարչական ակտի հասցեատերերին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

19.11.2018

X

VERIFIED OCSP 19.11.2018 13:10:37 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360